

լէպ, բայց մերժուեցաւ ժողովուրդէն, որ խաչատուրը կը ճանչնար օրինաւոր կաթողիկոս Կիլիկիոյ (տես Բարգէն կաթ. Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ, 1939, էջ 390—392):

Յովհաննէս պատրիարք Թիւթիւնճի, հակառակ դրամ հաւաքելու իր ճարպիկութեան, կաշառքներով չկրցաւ պատրիարքական աթոռին վրայ մնալ և մէկ տարի և մէկ ամիս պատրիարքութիւն ընելէ յետոյ տեղի տուաւ Սարգիս Թէքիրտաղցիի 1664 Ապրիլին: Նոր պատրիարքը Երուսաղէմի Աստուածատուր պատրիարքին աշակերտն էր: Երբ Եղիազար Այնթապցի 1659ին Ս. Յակոբի վանքին տէր դարձաւ, ամէն կողմ նուիրակներ հանեց: Ասոնցմէ մէկն էր Սարգիսը, որ Կաֆա ղրկուեցաւ և արդիւնաւոր նուիրակութիւն մը ունեցաւ, բայց Երուսաղէմ դարձին՝ նուազ արդիւնք ցոյց տուաւ: Եղիազար կասկածեցաւ և անոր շրջած քաղաքներէն ճիշդ հաշիւներ բերել տուաւ: Սարգիս ստիպուեցաւ պարտքը ճանչնալ և վճարումը պարտաժուրհակներով ապահովել: Եղիազար այդ ժուրհակները կէս գինով փոխանցեց այլազգիներու, որոնք սկըսան նեղել Սարգիսը, որ 1663ին Պոլիս անցաւ ճարմը խորհելու և պարտատէրները գոհացնելու համար, բայց չյաջողեցաւ և պարտատէրներու պահանջումով բանտարկուեցաւ: Հոն իրեն բանտակից գտաւ նախորդ պատրիարք Ղազար Սեբաստացին, զոր, ինչպէս յիշուեցաւ, Յովհաննէս Թիւթիւնճի պատրիարքը բանտարկել տուած էր: Մօտաւորապէս ատրի մը իրարու հետ ապրեցան, բարեկամացան և խորհրդակցութիւններ կատարեցին իրենց ոսոխներուն դէմ: Նախ Ղազար ազատեցաւ իր կուսակիցներուն միջնորդութեամբ, իսկ Սարգիս օգտուեցաւ նոյնիսկ իր պարտատէրներէն, որոնք նոր փոխառուութիւններով զայն